

ssylvania, Claudiopoli, 1833, հատոր Բ. էջ 560-561) : Ան դարձեալ բուռն պայքար մղած էր արդէն Թրանսիլվանիոյ մէջ կաթողիկոսական գիրկը առաջնորդելու համար տեղւոյն հայերը, եւ հուսկ ուրեմն յաջողած, 1866-ին, «դարձի բերելու» իրեն ընդգրկմացող Մինաս եպիսկոպոսը եւ անոր հետեւորդ քահանաները (Christophorus Lucaci: Historia Armenorum Transilvaniae. Wiennae, 1859, էջ 68) : Ան դարձեալ բուռն պայքար մղած էր արդէն Թրանսիլվանիոյ մէջ կաթողիկոսական գիրկը առաջնորդելու համար տեղւոյն հայերը, եւ հուսկ ուրեմն յաջողած, 1866-ին, «դարձի բերելու» իրեն ընդգրկմացող Մինաս եպիսկոպոսը եւ անոր հետեւորդ քահանաները

Վրդարէսքու հաստատած սոյն կանոնադրութեան համաձայն՝

Ա. Կտրիճները իրենց ուխտակատարութեան օրը պէտք է խոստովանին եւ հաղորդուին :

Բ. Ամէն կիրակի պէտք է ներկայ ըլլան պատարագին. Թերացողը եթէ վատահ է (խմբապետ) երկու շնչտակ տուգանք պիտի տայ, իսկ եթէ պարզ կտրիճ՝ մէկ :

Գ. Կտրիճները պէտք է ներկայ ըլլան Ժողովուրդէն որեւէ մէկուն թաղմանն ու փոս փորուելուն : Թերացողը պիտի վճարէ վերի տուգանքին կրկինը :

Դ. Կտրիճը մուտքի դրամ (պէրպնծայ) պիտի վճարէ իր կարողութեանը համաձայն :

Ե. Նշանաւորի առթիւ կտրիճին բաժինն է մէկ կարմիր :

Զ. Պսակի ատեն պէտք է ստանալ Փլօրին մը՝ ինչպէս կը ստանան Առաջնորդն ու քահանաները :

Է. Ուխտի պատարագի ատեն ամէն կտրիճ պէտք է Փլօրին մը տայ ըստ սովորութեան :

Ը. Պէտք է ամէն կտրիճ իր վատահին հետ ներկայ ըլլայ Ժողովուրդէն որեւէ մէկուն հարսնիքին : Թերացողը տուգանք պիտի տայ :

Թ. Վատահը պէտք է լաւ տնտես եւ շահեցնէ եղբայրակցութեան դրամը : Հասոյթները

ըր կը բաղկանան ծննդեան «Աւետիս»ի, Զատիկի «Հայր Մեր»ի, պսակի, Թաղման, եւայլն, ատեն ստացուած նուէրներէ : Ամէն տարի վատահը հաշիւ պէտք է տայ՝ եկեղեցականին, Ժողովրդեան եւ եղբայրակցութեան առջեւ : Գովեստի պիտի արժանանայ եթէ լաւ տնտեսած է, եւ պարտաւի՝ յոռի մտաակարարութեան մը պարագային, տուժելով նաեւ վնասը : Վատահը պէտք է արդարութեամբ կառավարէ կրտսերիճները, առանց նենդութեան, ատելութեան եւ նախանձի, այլ հեղութեամբ, խրատով, ամէնուն բնութեան համաձայն սիրաշահելով : Եթէ կտրիճներուն մէջէն մէկը անհնազանդ, կուտարար, ունայնախօս եւ կամ ուրիշ որեւէ յոռի վարք ունենայ, պէտք է զայն դատէ եղբայրակցութեան հետ միասին, ոչ թէ անոր զինով եղած ատենը, այլ լուրջ վիճակի մէջ : Վճիռը պէտք է դործադրուի : Եթէ մէկը դրոշմաւոր կտրիճի վարքով զատապարտուի շղթայի (լանցուխ) մինչեւ ապաշխարէ : Այն ծնողը կամ բարեկամները որոնք կը միջամտեն յանցաւոր կրտսերիճի մը տրուած պատիժին, պէտք է Առաջնորդին կողմէ կրեն հոգեւոր եւ մարմնաւոր պատիժ :

Ամէն կտրիճ պարտաւոր է խաղաղ ըլլալ եւ հնազանդ իր մեծաւորներուն, եղբայրակցութեան եւ վատահին :

Կանոնադրութիւնը կը վերջանայ մաղթանքներով, եւ հուսկ ապա Պօթօչանի, Եաշի եւ Ռոմանի կտրիճներուն վրայ «վատահ» կը կարգէ «զՍտեփան, զորդի Պօչանու (= Պօթօչան) Լուսիկ երեսփոխանին» եւ կը թուէ անունները եղբայրակցութեան մաս կազմող 46 «կտրիճ»ներուն :

Սոյն կանոնադրութիւնը, ինչպէս յիշեցինք, խմբադրուած է Էջմիածնի Եղիազար կաթողիկոսին (1682-1691) օրով, Հայոց 1139 եւ եւրոպական 1690 թուականին, Սեպտ. 12-ին, Թրանսիլվանիոյ Ճուրճով-Սան Միքայէլ քաղաքին մէջ : Եւ որքան որ Վրդարէսքու կամ Վերդարեան, որ զայն խմբագրած էր, տիտղոսով առաջնորդ Սուշովայի Հայոց վանքին, բայց արդէն թեքած էր դէպի կաթողիկոսինը, եւ սակայն Հայոց կաթողիկոսին վաւերացումը